Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/33895/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

«14» դեկտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ժ. Ասատրյանս գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Իջևանի Բենտոնիտշին» բաց բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ 07600534, գրանցման համար 67.120.00090, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ Ազատամուտ, էլեկտրոնային փոստի հասցեն՝ artkhech@rambler.ru) ներկայացուցիչ Արև Հարությունյան (նույնականացման քարտի համար 015147739, տրված 07.09.2023 թվականին 042-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 3244, լիազորագիր 03.10.2023 թվականին տրված մեկ տարի ժամկետով, էլեկտրոնային փոստի հասցեն՝ premiumlaw01@gmail.com, ծանուցման հասցեն՝ ՀՀ քաղաք Երևան Թումանյան 8, 528 գրասենյակ) ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի (ՀՎՀՀ 0842635, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ Վարդենիս քաղաք Հ.Անդրեասյան փողոց 4, էլեկտրոնային փոստի հասցեն՝ vardenis.gegharquniq@mta.gov.am, vardenis.gnumner@mail.ru) ներկայացուցիչ Ինգա Ավագյան (անձնագիր AR0555918, տրված 15.01.2018 թվականին, 004-ի կողմից, լիազորագիր 19.05.2023 թվականին տրված մինչև 31.12.2023 թվականը, ծանուցման հասցեն ՀՀ քաղաք Երևան Ն.Ադոնցի 6 շենք բնակարան 135, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 2011, էլեկտրոնային փոստի հասցեն՝ masnavoriravakankentron2018@gmail.com)՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու» պահանջի մասին **թիվ ԵԴ2/33895/02/23** քաղաքացիական գործով վճռի եզրափակիչ մասը հետևյալ բովանդակությամբ.

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 102-րդ, 104-րդ, 108-րդ, 107-րդ, 109-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով, 20-րդ և 27.2-րդ գլուխների պահանջներով՝

ՎՃՌԵՑ

1. «Իջևանի Բենտոնիտշին» բաց բաժնետիրական ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու» պահանջի մասին, բավարարել.

ա. Ճանաչել ոչ իրավաչափ և անվավեր ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավարի 20.09.2023 թվականի որոշումը՝ «Իջևանի Բենտոնիտշին» բաց բաժնետիրական ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից հօգուտ «Իջևանի Բենտոնիտշին» բաց բաժնետիրական ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար և 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

2.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից հօգուտ «Իջևանի Բենտոնիտշին» բաց բաժնետիրական ընկերության՝ 350.000 ՀՀ դրամ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու մնացած մասով մերժել:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

5. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ